

ՀԱՅԳԵՆՆԵՐՈՒ ՀԱՆԳՐՈՒԱՆ

ՀԱՅԳԵՆՆԵՐՈՒ ՀԱՆԳՐՈՒԱՆ

ՀԱՅ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՊԱՆԴՈՒԽՏ ՕԶԱԽԻՆ

ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐԻ 250ԱՄԵԱԿԻՆ

Գրեց Յ. ՇԻՐԱԶ

Օտար ջրերում հայացեալ կղզի,
Հայոց հին լոյսն է ֆեզնով նորանում,
Բայց ներքի քէ իմ գարմանքը խօսի՝
Ի՞նչպէս ես առանց մայր Արաֆա մնում
Թէկուզ հեռում էլ դու լոյս ես ծնում:

Իմ Սուրբ Ղազարի կղզիդ հայավեհ,
Հայոց անունն ես դու աշխարհ տանում,
Բայց քեզ օտար ծովն ի՞նչպէս էլ քովէ՝
Ի՞նչպէս ես առանց Սեւանի մնում
Վշտից ի՞նչպէս չի սիրտդ սեւանում:

Ո՛վ Սուրբ Ղազարի հայախօս կղզի,
Մխիթարում է կեանքդ Մաշտոցով,
Բայց ջրերում էլ, դեռ օտար յոյսի,
Ի՞նչպէս ես ծաղկում առանց Վանայ-ծով,
Դիւցազն ես, իրաւ, մտքիդ երկնածով...

Ի՞նչպէս ես լուսուել առանց Սեւանի,
Առանց Աղթամար՝ ո՞նց ես ղողանջում,
Ո՞նց ես կամարուել դու առանց Անի,
Առանց հայրենիք՝ ի՞նչպէս չես փլչում,
Ուր օտար կոչն է հայ լեզուն ջնջում...

Գիտեմ՝ տփնում ես՝ այս էլ դարէց-դար՝
Հայրենիքից դուրս՝ հայրենեաց համար,

Ո՛վ Սուրբ Ղազարի հայաջահ կղզի,
Բայց ո՞նց ես ջահուել, առանց Երեւան,
Ի՞նչպէս չես մեռնում՝ առանց Մասիսի,
Առանց հող՝ ո՞նց էք վահանուել, Վահան:

Ո՛վ Սուրբ Ղազարի Միաբանութիւն,
Դու սրտի հերոս, մտքի դիւցազուն,
Ներս ու դրսից էլ Աստուծոն ես հագած,
Բայց ո՞նց ես մնում առանց Արագած՝
Հեռուից կ'երեւո՞յ իր կանթեղը քեզ,
Որ օտար մթնում խոր չխարխալես...

Ես քո վշտից էլ գլուխ չեմ հանում՝
Ի՞նչպէս ես՝ առանց Մասիսի դիմանում,
Երբ ես՝ նայելով բանտուած Մասիսին՝
Ինքն էլ վանդակուած մի հաւք եմ քում,
Ուզում եմ ճշալ, մանուկ Յիսուսին՝
Թէ աշխարհն ինչո՞ւ մեղքը չի քաշում:

Օտար ջրերում խարխալ ես ձգել...
Մինչ հայ է տեղնում ծովն էլ մեր Վանայ,
Սուրբ Ղազար, մի՞թէ չես նարոզ փրկել
Գէթ Վանայ ծովդ, յոյսով Սեւանայ,
Գէթ Արարատս՝ մանկերից վայոց,
Որ մխիթարուի նոր կեանքս էլ Հայոց...

1968, Երեւան

ՀՈԳԻՆԵՐՈՒ ՀԱՆԳՐՈՒԱՆ

Գրեց Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

Ի հայրենեաց նծդեհի յօժարք, յանխուլ կղզիս,
Ի սպաս Փրկչին, մօրըն Կուսին եւ Հայ ազգիս,
Ուր միաբան վաստակեցին, հանգչին եւ անդ,
Հարք և եղբարք Մխիթարեանք յոյս անվրկանդ,
Յարփիանալ մահահալած կենացն աւուր,
Նորադիտակք գուգապարել լուսափետուր:

Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ (1873)

Ա.

Այս է ճամբան յաւերժական օրերուն,
Որ ետ երբեք չի դառնար,
Ուր կը տիրէ խորհրդաւոր Լըռութիւնն,
Անսահմանին հաւասար:
Եւ դուռն անոր հաւատքը լոկ կը բանայ,
Աւետարանը ձեռքին.
Յոյսին հետ քոյր՝ մըլխիթարանքը կու գայ
Տալու ժրպիտ մը սուգին:
Խաչեր պըղինձ, խաչեր երկաթ ու մարմար
Դէպի անհուն կ'երկարին,
Ուր կանդ առաւ արեգակին հետ աշխարհ,
Անծանօթի փակ սեմին:
Ուր նոճիներ, իմաստութեան զերդ կոյսեր,
Վառած շողերն արեւուն,
Կ'առաւօտեն որ դայ փեսան կենսաբեր
Յիսուսական օրերուն:
Կապոյտ շուքեր եւ վարդաբոյր ծիրանի
Թափանցկօրէն կ'ամպանան.
Բաղեղն անխօս, քոյր տրամութեան սիրելի,
Կը զրկէ սիրտ ու զամբան:

Կ'ալեկոծի յանկարծ երկինքը խաղաղ,
 Հաղար թեւեր կը բախեն.
 Ես չեմ լըսած այսքան խորունկ սրտի տաղ
 Բանաստեղծի լարերէն:
 Կ'անցնին երկչոտ աղաւնիներ ըսպիտակ
 Փնտռելով դէմք մը ծանօթ.
 Ու կը հիւսեն թեւ թեւի հետ մէկ պըսակ
 Մեռելներուն զերդ նարօտ:
 Ո՛րքան յուշեր եւ գեղեցիկներ սոխակի,
 Դամբանի մօտ մընացին.
 Քանի՛ բոյներ, նըման խորունկ սեւ աչքի,
 Կախուած են հոս տակաւին:
 Երգեր անյայտ եւ մըտերիմ մըմունջներ
 Կը թըրթըռան օդին հետ.
 Բառեր սիրոյ, խորհրդաւոր հին խօսքեր
 Լոյս եւ երանդ են յաւէտ:
 Հայաստանի Ոգին հաղար թեւերով
 Այստեղ կ'իջնէ ամէն օր.
 Հայու կամք է՝ լեռներ շարժել հաւատքով,
 Սրտեր բերել իրար քով:
 Ամէն շիրիմ ունի ածու մը փոքրիկ,
 Մէջն անըրջանք Մայիսի.
 Այգուն այգուն կը փոխուի սէրը ծաղիկ,
 Խոր գիշերներն ալ ասողի:
 Ո՛հ, մի՛ փնտռէք հոս տրամուծիւն մարդկային,
 Եւ ոչ անյոյս ողբի ձայն.
 Վանականներ իրարու մօտ կը հանդէն,
 Եւ սիրտ սրտէ անբաժան:
 Եղբայր էին, գաղափարի ուխտաւոր,
 Եւ աշխարհէն հեռացած,
 Դէմքեր խոհուն, իմաստութեամբ ալեւոր
 Լոյսին համար լոկ ծընած:
 Մէկ սիրտ էին, մէկ հաւատքի հաղար թեւ,
 Եւ մէկ անուն հայրենի.
 Քիչ մը երկինք, կամար կապոյտ մը թեթեւ,
 Կղզին Սեւան կը փոխուի:
 Ամէն դամբան մասունքի տուփ մ'է ոսկեայ,
 Հայրենական ողբին.
 Պաղունց մը հող, վանկ մ'աղօթքի հընօրեայ,
 Մահն ալ կ'ընեն աղղային:
 Ի՞նչպէս յաւէտ բաժնըւէին Մասիսէն,
 Եւ մոռացօնքն ըլլար մէկ.
 Ուխտած էին կեանքը կեանքի փոխարէն՝
 Բուժել Անին վշտաբեկ:
 Ապրեցան միշտ Խաչեցեալին հետ խաչուած,
 Եւ ճգնեցան միասին.
 Մենութեան մէջ, ճըրագի տակ խոնարհած,

Լոյսն երկինքէն կ'առնէին:
 Լըճակ մը լուրթ, լայն աչքերով կը նայէր
 Պատուհանէ պատուհան.
 Ուր միշտ հակած դըլուխ մը կար ալեհեր,
 Դիմացը խաչ ու մատան:
 Ու միասին ցանեցին սերմն ոսկեւէտ
 Համայնական դաշտերու.
 Մըտերմացաւ Աստուած՝ հողէ մարդուն հետ
 Իբրեւ հնձուոր սրտերու:
 Արդ կը ննջեն այնքան խաղաղ, այնքան լուռ
 Որ կը լսուի լոյսի ձայն.
 Կը լսուի հեւքն ըստուերներուն թըխաթոյր
 Նոճիներուն ապաստան:
 Մենք ենք այստեղ ձեռքը բախտին խաղալիկ,
 Կեանքն է անդին իրական.
 Երեւոյթներ մենք կը կոչենք գեղեցիկ,
 Որ հովին հետ խոյս կու տան:
 Ո՛հ, թէ բացուէր պահ մը երկինք մեզ համար,
 Պիտ'ըլլար մահն յաղթանակ.
 Խորհուրդ մ'է այս, որ կ'երկարի դարէ դար
 Տանջելով մեզ շարունակ:
 Ո՛րքան յուզուած լըռութեան մէջ կը կրկնեն,
 Լեռան քարոզն Յիսուսի.
 — Ինծի եկէք, խոնջ մըշակներ ծառաւի,
 Ես եմ աղբիւր կենդանի —:
 Եւ դանդաղներն՝ հրեշտակի պէս երկիւղած,
 Կ'իջնեն ամէն մէկ դամբան.
 Իրենց համար անդենական դուռն է բաց,
 Աղօթքին հետ վանական:
 Քանի՛ թռչուն երամ երամ կը թառին
 Դաշնակութեան թեւերուն.
 Մատներն ինչպէս լարին վըրայ տաւիղին,
 Երբ կը դարնէ կուսութիւնն:
 Ես լացած եմ զանգերուն հետ բիւր անդամ,
 Երբ նոր տերեւ մը կ'իյնար.
 Երբոր աչունն իր շուրջառով ոսկեծամ,
 Մահուան ուղին կը բանար:
 Ա՛հ, կը յիշեմ դէմքեր բարի, խոհական.
 Եւ ըստուերներ ծանրաքայլ.
 Երբ կ'անցնէին նոճիներու լուռ ճամբան
 Ծերունիներ անայլայլ:

Բ.

Ո՛վ հողիներ, որոնց այս սուրբ վայրն եղաւ
 Տուն սիրելի եւ դամբան.
 Կը հաւատամ թէ հողն Աստուած հոս բերաւ,

Երբ այցելեց Հայաստան:
 Բերաւ մասունք աղօթքներէն սուրբերու,
 Ու քար բերաւ վանքերէն.
 Երբոր զօղեց երկու կղզի իրարու,
 Կամարն իջաւ երկինքէն:
 Աղքատ էին եւ փառքերէ մերկացած,
 Ոչ քոյր, ոչ մայր՝ արցունքոտ,
 Մոմեր բերին ձեռքերու մէջ բոցարծարծ,
 Այլ լոկ անուն անուան մօտ:
 Ապրեցան միշտ պարոյրներու մէջ խունկի,
 Ոգիին հետ հայրենի.
 Մէկը միւսէն վառեց լապտերն իր կեանքի
 Աստղերուն պէս երկրնքի:
 Ո՛վ երջանիկ բախտ՝ նըւիրեալ հէդ մարդուն,
 Խորհուրդ սիրոյ անքնին.
 Երբ չի կապեր հողը շղթայ քայլերուն,
 Ոչ արբեցող ցանկութիւնն:
 Նուրբ ամպի պէս սըքեմն իրենց կը ծածկէ,
 Աստուածութիւնն հոգիի.
 Իրենց համար հաւատքն ուրիշ հաւատք է,
 Ուր այդն երբեք վերջ չունի:
 Աշխարհ զիրենք չողմոնեցով ոսկեթեւ
 Զառաւ գրկին մէջ երբեք.
 Ո՞ր փափկութիւնն համբոյրներովն իր թեթեւ
 Կեանքն հաստատեց դիւրաբեկ:
 Գիտէին թէ կեանքը մարդուն գեղեցիկ,
 Լոկ պատրանք է սիրելի.
 Կ'երազէ միշտ գրկելու Յոյսն երջանիկ,
 Յոյսը խոսող աղանի:
 Քանի սրտեր խորտակուեցան զերդ ընկեր
 Մեղկ մատներու հըպումով.
 Ու չըզլտան խոր վէրքերուն քաղցըր դեղ
 Արեւելեան բուրումով:
 Տեսած եմ ես ոսկեղբուրդ շիրիմներ,
 Արձաններով ողբակոծ.
 Պաշտեցին կեանքն ու պարպեցին բաժակներ,
 Կիրքն անյագութեւ, սիրտը խոց:
 Ո՛վ բընութիւն, որ ամէնուր պճնեցիր,
 Ծաղիկներով հաճոյքի,
 Ինչո՞ւ մըտաւ եւ օձն այնտեղ դաւադիր
 Իր խայթոցով մահալի:
 Արցունք չունիմ ծովերու չափ՝ ողբալու,
 Մոլորաքայլ մարդկութիւնն,
 Ո՞ր լարն հնչեմ՝ խաղաղութիւն երգելու,
 Եւ ոխն ոխէն բաժնելու:
 Ինչո՞ւ համար այսքան պայքար, այսքան մահ,
 Ե՞րբ հասկ տըւաւ նենդութիւնն.

Ամէն մարդու երկինք արեւ մը կու տայ,
 Խինդ կը ձօնէ բընութիւնն:
 Ո՛վ Տէր, ափերդ թռչուններուն բոյն ըրիր
 Աչքերդ անծայր լուրթ երկին.
 Ըրէ այնպէս որ մանկութիւնն անբասիր
 Ալ չըտեսնէ սեւ արիւն:
 Աշխարհս ըլլայ աւետարան մ'ընդարձակ
 Եւ դուն այնտեղ սերմանող.
 Ո՛հ, մի՛ թողներ որ հասկն իյնայ ոտքի տակ,
 Եւ աճի փուշը խայթող:

Գ.

Նստած եմ ես նոճիի սուրբ ըստուերին,
 Սիրտըս սափոր մ'է խունկի.
 Ճերմակ վարդեր ճըրադի պէս կը վառին,
 Շիրիմներուն սիրելի:
 Հոս չի հասնիր ձայնն ալեկոծ աշխարհին,
 Եւ ոչ յոյսեր կը խամբին:
 Խորհուրդ մը կայ, որուն դիմաց տակաւին
 Իմաստութիւնն է լըռին:
 Խաչեր շարուած, երկինք հասնող թեւերով,
 Արեւուն մէջ արեգակ,
 Կը բազմանան, տեսիլք կ'ըլլան հըրաշքով
 Մէկը միւսէն լուսարձակ:
 Եւ ամէն մէկն անուն մ'ունի քանդակուած,
 Զերդ հաւատքի յուշարձան.
 Ո՛րքան դարեր դառնան երկինք բոլորած,
 Կը չողչողան եւ այնքան:
 Ո՛րքան արփին կ'երազէ միշտ դալ այցի,
 Հաղիւ ծովէն բարձրացած,
 Կը չօչափէ, շիրիմներուն կը փարի
 Իր թեւերով երկեղած:
 Սուրբ է շիրիմն եւ խոկումի լուռ խորան,
 Աւետարան անբարբառ.
 Որուն դիմաց կը խոնարհին անպայման
 Հըպարտութիւն եւ պայքար:
 Երկնային է գիշերային լըռութիւնն,
 Աստղերու ցոլքն անըրջանք.
 Ուր հորիզոնն հին տաճարի մը հանդոյն
 Ունի միայն վեհութիւն:
 Մենք չենք գիտեր, բայց կ'ըսեն թէ կայծ մ'ունի
 Ամէն դամբան առանձին.
 Ան չի մարիր, դեռ աւելի կը փայլի
 Անոնց՝ որ լոյս սիրեցին:
 Սիրեցին լոյս, երազ ու խոհ սիրեցին,
 Պայման կեանքի վերնախան.

Սիրտը խոնարհ եւ բարձունքնէ՛րը մտքին
 Լոկ հանձարներն ունեցան :
 Ի՞նչ սրբութիւն եւ ի՞նչ խորհուրդ հողեկան
 Եւ ըստուերի մեղմութիւն .
 Կարծես ըլլար հին սրբալայր մ'անխորան ,
 Ուր քաղցր է միշտ տրտմութիւնն :
 Աստուած միայն հողիներուն կը խօսի ,
 Լոյսի երգով ամէն ժամ .
 Ինքը զիտէ շղթայել կեանքը կեանքի
 Եւ տալ օրէնք ու պատգամ :
 Տապանակէն բացին ճամբայ նոր կեանքի ,
 Ու սէրն եղաւ պարեգօտ .
 Ապրեցան զերդ աւետարան կենդանի ,
 Վանականներ իրար մօտ :

Դ.

Արդ կը ննջեն խոնջ մըշակներ միաբան
 Սերմանողի պէս ցնծուն .
 Թեթեւ բարտին կը սօսալիէ մեղմաճայն
 Երգի մը պէս անանուն :
 Կ'իյնայ տերեւ մը զեփիւռի մատներէն
 Մէկ դամբանէն միւս դամբան .
 Թերեւս առած էր սոխակի մը բոյնէն
 Առաջին օ՛րը դարնան :
 Ամէն դամբան կը հաւատամ թէ ունի
 Բարի ոգի մ'առանձին ,
 Որ անծանօթ երկինքներէն կը խօսի ,
 Եւ տօներէն անցեալին :
 Ոչինչ էր մահն՝ աչքերուն մէջ թէ մընար ,
 Փոքրիկ ճաճանչ մ'արեւէն .
 Թէ սիրտն երբե՛մըն Կիրակի ունենար ,
 Եւ հայրենի վարդաւառ :
 Բայց լըճակէն կու գայ մեղմիկ զով քամին
 Թեւերուն տակ կապոյտ թոյր ,
 Արքայութեան պատկերն ունի այս կղզին
 Եւ սէրն ունի ուսհամբոյր :
 Ոչ մէկն է հոս աղօթքի մէջ մոռցըւած ,
 Ոչ օրն առանց ծաղիկի .
 Խոնկի ծուէն մ'երկինք չ'ելլեր թեւաբաց
 Թէ բոյրն հոս ամպ չըփոխուի :
 Վանականի մահն արեւմուտք մ'է ոսկի ,
 Արշալոյսի մը համար .
 Լոյսն ըմպեցին՝ հաղորդութեան զերդ գինի ,
 Գեղարուեստի սիրահար .
 Արդ մտքերու սերմերն ինչպէս ոսկի ծով
 Համայնօրէն կը ծըփան .

Ու սերունդներ , կախաներու բաժակով
 Լոյսի աղբիւրը կ'երթան :
 Գեղարուեստն իր ոսկեծղի մատներով
 Կը նըւագէ մեզ համար .
 Առանց մեղքի Ագամն ինչպէս Ծառին քով
 Եւայի սէ՛րը կը զգար :

Ե.

Սրտիս կու գայ բոյրն հայրենի դաշտերուն ,
 Ողիւյզներուն սաթի զոյն .
 Տաճար մ'է հին լի բարութեամբ ամէն տուն ,
 Եւ ամէն ափ յորդ բաժակ :
 Կը լըսեմ ես ձայնն եղէգին ճարճատուն ,
 Մազաղաթէ մազաղաթ .
 Յորճանք կու տայ Արարատի պատմութիւնն
 Սրտի մը հետ խանդակաթ :
 Ալիք ալիք դարերն իրար կը գըլեն ,
 Էջերը բոց են առեր .
 Քարայրներէն , հովիտներէն , բերդերէն ,
 Կ'ելլեն մարդիկ , աստուածներ :
 Ո՞ր Սերովբէն հնչեց փողերն յարութեան ,
 Սարսեց Մասիս եւ Սիփան .
 Ո՞ր արեգա՛կը տարածեց ծիածան ,
 Ներքեն ամբողջ Հայաստան :
 Մինչ ալեւոր մ'անհորիզոն տեսիլքով
 Լապտերին տակ առկայծուն ,
 Կ'ողեկոչէ արքայական փառքերով
 Մեր հողածածկ պատմութիւնն :
 Ու կը պեղէ , կը պեղէ հող ու դամբան ,
 Հազար աչքեր կը բացուին ,
 Հազար սրտեր կը տըրոփեն ալեճայն
 Օրերն ինչպէս Տիգրանին :
 Ի՞նչ յաղթանակ , ի՞նչ գեղեցիկ յարութիւն
 Անթամանակ դարերուն .
 Ուր մոռացօնքն իր թեւերով մըթադոյն
 Զունի ճնշող ծանրութիւն :
 Քաղաքներ հին , զիւղեր յանկարծ կը լեցուին
 Ամբոխներով փրփրալի .
 Զօրականներ եւ արքաները կ'անցնին ,
 Կամարներէն Անիի :
 Օճախներուն ծուխն ամպացած դէպ'երկին
 Պաշտամունք է հայրենի ,
 Ուր սերունդներ հուր ու բոցով կը վառին ,
 Մըկըրտութիւն նոր կեանքի :
 Կարծես Գողթան բամբուհները կ'երգեն
 Սօսիներու սրբութիւնն ,

Ու վարձակներ զոհերու շուրջ կը պարեն
 Փարած երգի թեւերուն:
 Ու խաղաղարդ թագաւորները կու գան
 Դրօշակներով արծուների.
 Հայրապետներ՝ որոնց ասին մէջ խորանն
 Եղաւ լոյսին արժանի:
 Ինչո՞ւ աչքերն յանկարծ արցունք կը տեղան,
 Մատներն ինչո՞ւ դողդոջ են...
 Վայրենարշաւ բարբարոսները կու գան
 Թաթար փողեր կը հնչեն:
 Եւ ամէնուր արիւն... արիւն կը տեսնէ,
 Եւ փրկատակ փրկատակի.
 Բազմաչարչար հողն հայրենի կը հեծէ,
 Ալիքի տակ կատաղի:
 Կը տըրտիւն լէնկթիմուրի սմբակներ
 Հողն է ծովի փոթորիկ.
 Ո՛վ հայրենիք, հաղար անգամ տընաւեր,
 Հաղար անգամ գեղեցիկ:
 Ողբ է հիմա, սրտի մորմոք իր մատեանն
 Եւ պատմութիւնն է մըռայլ.
 Վանքեր թափուր, լուռ են զանգեր, Շարական
 Սուգն ամպի պէս ծալ ի ծալ:
 Բայց եղէգէն բոցը կ'ելլէ Վահագնի,
 Բոցին մէջէն՝ հայ Ոգին.
 Նահատակներ եւ կուսաններ վարդաժղի
 Պատերազմիկ կը փոխուին:
 Ո՛վ բիրտ ուժեր, ամէն դարու, չէք կրնար
 Շղթայ դարնել հաւատքին.
 Ձէք կրնար դուք փակել սրտին ճանապարհ,
 Ոչ ամպ քաշել Մասիսին:
 Ի՞նչ զօրութիւն եւ ի՞նչ կամքի բուռն հարուած,
 Որ շունչ կու տայ քարերուն.
 Եւ արիւնի ծովէն կ'ելլէ սրբացած,
 Երիտասարդ Հայութիւն:
 Եւ ծերունին արփիացած հաւատքով
 Դարձեալ Յոյսին թեւ կու տայ.
 Կը շարունակ նոր նահատակներ իրար քով
 Յոյսն արեգակ կը դառնայ:

2.

Մինչդեռ արփին ծառերուն մէջ կը խաղար
 Կը սօսափէր եղեւինն,
 Շիրմի մը քով ճաճանչ մ'ինկաւ ոսկեծայր,
 Հայեացքիս հետ միասին:
 Կարծես իջան աներեւոյթ ոգիներ
 Արագածի գագաթէն.

Եւ լոյս առին խաչին քառակ բաղուկներ,
 Ինչպէս սուրբեր կը տեսնեն:
 Լըսեցի ես երգ մ'անորոշ եւ դանդաղ,
 Հին տաւիղ էր ոսկեւար.
 Ալեւոր մ'էր դէմքը բարի եւ խաղաղ,
 Մատեան մ'ունէր ոսկետառ:
 Հոն հայրենի դաշտ ու հովիտ ծաղկաբեր
 Հաղար դոյնով նըկարած,
 Պանդուխտ սրտիս կարօտին դեղ կը բերէր
 Օճախներէն բոց առած:
 Տեսայ գիւղեր, բերդեր տեսայ, վանք տեսայ,
 Տեսայ քրտինքն հողուորին.
 Հօտաղներու հոռովներն հեռակայ,
 Սրտիս վըրայ մընացին:
 Հովիւներուն երգը կ'անցնէր ձորէ ձոր,
 Ինչպէս սիրեց Կոմիտաս.
 Կեանքն էր հայուն իր պարզութեան մէջ աղուոր,
 Երջանկութիւն եւ երազ:
 Ծերունի ուրախ, իբրեւ մանուկ, կը պարէր
 Վարդապետի աղբիւրին.
 Անգամ մը գէթ վիճակն իրեն բախտ բերէր,
 Մայիսներու եւ արփին:
 Պարզած թեւերը դրքին մէջ լայնաբաց
 Կ'երազէր հին խնդութիւնն.
 Ամէնուրեք նա կը տեսնէր լուսաբաց,
 Ամէն աչքի մէջ դարուն:
 Երբ պատըշգամ պատըշգամի կը դօղէր
 Կանաչ, կարմիր Կիրակին,
 Ո՛րքան սիրոյ դեռ չըզըրուած ականքներ
 Կը ծաղկէին միասին:
 Կակաչի դոյն հազած կուսան, պարմանի,
 Կանաչ արեւ ունէին.
 Աչքերն իրենց՝ խորունկ ծովէն աւելի,
 Չունին նըման տակաւին:
 Թոնիրներէն թարմոտ հացի բոյր կ'ելլէր,
 Արքայական տենչին հետ.
 Եւ ալեւորը մանկացած կը հրճուէր
 Արտոյտի պէս երգաւէտ:
 Ո՛րքան սրտին երանութիւն կու տային,
 Աղօթաբոյր դմբէթներ,
 Ուր դերբուկ կար, հոն ծնրադիր առանձին,
 Սէրը քարին կը յանձնէր:
 Ո՛վ հայու սիրտ, միշտ խանդավառ, միշտ մանուկ,
 Նըման մեր խենթ հովերուն.
 Երազ եղաւ, կեանքդ առասպել խուսափուկ
 Եւ հըրաչքի պատմութիւն:

Է.

Ես կ'ուզէի ոսկի բամբուռ ունենալ
Վարձակի պէս վաղեմի.
Ձայնն որոտուն, փոթորիկի պէս թաւալ
Հասնէր մինչեւ երկրնքի:
Ապա ցանել ժողովուրդին վարդի ջուր,
Ձերդ հեթանոս օրհնութիւն.
Իջնէր Աստղիկ, բանաստեղծի քաղցր քոյր,
Ներշնչումի սուրբ աղբիւր:
Այն ըսպիտակ շիրմաքարին մօտ կըճեայ,
Ես հին փառքեր երգէի.
Այնտեղ պառկած քրմահանդերձ մէկը կայ,
Մուսաներուն սիրելի:
Ուր հայ Ոգին կու գայ, բամբուռ ձեռքին
Շիրմին ամէն օր այցի:
Կու գայ Անուրջն, յաւերժահարս անմարմին,
Ձեռքին քնար տասնաղի:
Պանդուխտ չէ նա, ոչ հողիով տարազիր
Աստուածներու դըրախտէն.
Սիրեց երգել մեր հին դարերն ու երկիր
Վանկեր առաւ արեւէն:
Ո՛հ բանաստեղծ, որուն մահն է երեւոյթ,
Թէ աճիւնն իսկ հող դառնայ.
Ամպերն ինչպէս պարզ երկրնքին դէմ ծածկոյթ,
Հողին արեւ կը մընայ:
Դեռ կը հնչէ մեհենական քնարն իր.
Կը զարնեն լարն աստուածներ.
Արարչադործն հազիւ զանգած էր երկիր,
Նա ըստեղծեց դիւցաղներ:
Երբ Անահիտն ոսկեծղղի կ'երեւէր
Արշալոյսն էր առաջին.
Եւ Հայկանոյչ տալիւ ձեռքին կը պարէր,
Ինչպէս շուշա՛նը դաշտին:
Բարձրացաւ նա Մասիսներէն ալ անդին.
Անծանօթէ անծանօթ.
Հոն ուր յաւէտ արեգակներ պահեցին
Անանց փառքի առաւօտ:
Բարբառն եղաւ կայսերական ծիրանի,
Դիւցաղներուն արժանի.
Եւ աղամանդ աղամանդի հետ շողշող
Ձըրահն եղաւ հայրենի:
Քանդակեց նա, քանդակեց կուրծք ու ճակատ
Իմաստութեան տառերով.
Ոչ մէկ բարբառ հովը տարաւ անապատ,
Ոչ ամպ ծածկեց խաւարով:
Եւ ի՛նչ չըքեղ զընացք ունէր իր հողին,

Ձինեց Հայկի զաւակներ.
Ձայնը բռնեց ամբողջ երկիր եւ երկին,
Աստուած Հայկին էր ընկեր:
Քաշեց լարերն իր փառագոյ բամբուռին,
Հայկը քաշեց լայն աղեղ.
Շանթերու տակ ինկաւ թաւալ թշնամին,
Բռնաւորին հետ ահեղ:
Ու շանթերէն ծընաւ մանուկ Հայաստան,
Ձեռքերուն մէջն Աստուծոյ.
Ձայն քամիներ օրօրեցին ոռնածայն
Իրերեւ ծընունդ Վահագնեան:
Պիտի գային դարերուն հետ արեւներ,
Գրկած անունն հայրենի.
Ու բանաստեղծն Արարատին անըստուեր
Պիտի ձօնէր ծիրանի:

Ը.

Թոյլ տըւէք ինձ ճակատս դընել քարէ քար,
Պարգել ձեռքերս դէպ'անհունն.
Ես պէտք ունիմ հաղորդութեան կենարար,
Եւ խոկումի սրբարար:
Պէտք է յաճախ մեռելներուն հետ խօսիլ,
Լոյսը վայրկեան մը մոռնալ.
Նոր հաւատքով կեանքը ծայրէն ըսկըսիլ
Եւ յոյսին հետ նոյնանալ:
Ես կը սիրեմ անդունդն իջնել խորհուրդի
Ձերդ քարայրի միանձուն.
Ու զան մարդիկ սրբավայրի պէս ուխտի,
Ըզգան իրենց մարդկութիւնն:
Մեր կեանքը լոկ երեւոյթ չէ վաղանցուկ,
Երկրէ երկին կ'ընթանայ.
Հողին է որ կը պըլպըլայ անաղմուկ,
Մարմինին մէջ շափիւղայ:
Ո՛հ, շիրմներ, իմաստութեան խոր մատեան
Որ կը կարգայ լոկ Աստուած.
Քանի անգամ մարդն հակեցաւ ձեր վըրան
Ընկրկեցաւ սարսափած:
Շատ են անոնք եւ անուններ սիրելի
Որ հողիւս կը խօսին.
Իրենք տըւին ինձ ալ նըւագ տասնաղի
Եւ հայրենի շունչ տըւին.
Սրտեր, որոնք Լուսաւորչի զերդ կանթեղ՝
Սէրն ունէին իւրի տեղ,
Ու վառեցան ճմարտութեան հետ անշեղ
Ճառագայթի մ'հանդունակ:
Ուր շիրմ կայ, հոն կայ հողի սրբութիւն

Երկինք մը մօտ աւելի.
 Մի՛ խանդարէք յաւերժական իրենց քունն,
 Եւ յիշատակ եւ անուն:
 Ո՛րքան թաքուն հորիզոններ կը բացուին
 Խուփ աչքերէն ալ անդին.
 Շիրիմներէն դադարներ կը ծնին,
 Գաղափարն է կեանք ինքնին:
 Ուր կը սիրէ հանճարը միշտ սաւառնիլ,
 Փնտռելով լոյսն հաւատքին.
 Հող ես, ըսաւ, Աւետարանը մարմնին,
 Ոչ թէ անմահ հոգիին:
 Մանուկ էի եւ իմ ձեռքէս գըթալիր
 Բռնեց մուսան հայրենի.
 Այստեղ բերաւ երջանկութեան ի խնդիր,
 Օրերս ըրաւ Կիրակի:
 Ես համբոյրով դրկեցի խաչ ու մատեան,
 Աչքերս արեւ սիրեցին.
 Եւ պանդուխտի տրտում ամպերն հեռացան
 Երբ ցոյց տըւին հայ Ոգին:
 Ես պարզեցի երկու ձեռքերս դէպ՝ երկին,
 Ուսկից արեւ կը ծագի.
 Ծունչ խնդրեցի, մեր դաշտերուն ջերմ հոգին,
 Եւ ծիածանն Մասիսի:
 Բայց ի՞նչ ձայն է ողբերգութեան մը խորին,
 Որ ծանրաթեւ կը հասնի.
 Ինձ կը թըլի խորհրդաւոր հին ոգի,
 Որ Նարեկէն կը խօսի:
 Զահ մը ձեռքին՝ քարայր կ'անցնի, վանքէ վանք.
 Դիմացը ծովը վանայ.
 Ուր սուրբն ունի աստուածային դառանցանք,
 Հոն արշալոյս կը բանայ:
 Սիրտն է փրփուր, սիրտն ալեկոծ կը դռէ
 Տիեզերքէ տիեզերք.
 Այնտեղ ուրիշ արարչագործ երկինք է.
 Որ չունի հուն եւ եղերք:
 Զեմ գիտեր ո՞ւր կը հանդէի այն վանականն,
 Որ ողբերու մէջ տեսաւ,
 Հորիզոններ եւ տառապանք հոգեկան,
 Եւ ամոքեց ամէն ցաւ:
 Երանական տեսիլներով իրեն հետ
 Ողբերգութեան ծովն անցայ,
 Եւ աղօթքներ աստուածօրէն սրտադէտ,
 Եղան կեանքիս մանանայ:
 Ո՛վ պատրանքով պնծած աշխարհ մարդկային,
 Դու չես կրնար բարձրանալ.
 Հոն ուր հոգին երկինք մ'ունի առանձին,
 Նարեկին հետ նարեկնալ:

Թ.

Երբ կը բանան երկնէ իջած Շարական,
 Մատներ դեղին, երկիւղած,
 Ո՞ւր կայ արդեօք այնքան չքնաղ բուրաստան,
 Ուր շրջելու դայ Աստուած:
 Ուր միասին զարնեն ծնծղայ քերկրալիր
 Շընորհալին եւ Մեսրոպ.
 Եւ Հայութեան հաւատքին քով ծնրադիր՝
 Աղօթք ընեն ինքնամփոփ:
 Ա՛խ, դընէի, դընէի վանկ մ'երգերէն
 Հաղորդ փակուած շրթներուն,
 Ու բանային իրենց աչքերը նորէն
 Երբոր կու տան սուրբ Ողջոյն:
 Գային շարքով ափերուն մէջը սեղմած
 Մազաղաթէ Շարական.
 Խորանին շուրջ մոմերուն լոյսն ըզրեցած,
 Տային մեզ հաց սրբութեան:
 Յետոյ զանգերն իրենց համար հնչէին,
 Այդ օրն ըլլար մեզ Զատիկ.
 Հանդիպէին Յարութեան մեծ հըրաշքին
 Մարմիններով թափանցիկ:
 Երազ մը չէ՛, այս է խոստովմն հաւատքին,
 Որուն համար խաչն առին.
 Ու ծովերէն, մրրիկներէն այս կեանքին,
 Նաւահանդիստ փնտռեցին:
 Ա՛յն կը մեռնի եւ հողին հետ հող կ'ըլլայ
 Որ չի թողներ յիշատակ.
 Ոչ իր չիրմին փունջերով Գութը կու դայ,
 Դընելու սէ՛րը պըսակ:
 Հարկ է մեռնիլ, եւ ո՛չ չարէն պարտւած,
 Ոչ երկնի դէմ բռունցքով.
 Երանի՛ր որ կը ննջէ սիրտն հաշտւած,
 Եղբայրութեան անունով:
 Բայց հոս չըկայ անէծքի թոյնն Ադամի,
 Ոչ մախանքով վէրք սրտի.
 Սէրը կու դայ սիրոյ ձեռքէն կ'ընդունի
 Հոգի մարմին միասին:
 Եւ ողջ, մեռած, մէկ ընտանիք, մէկ անուն,
 Կ'ողջունեն լոյսն ամէն օր.
 Իրենց համար ալ կը ծաղկի բընութիւնն,
 Յիշատակի մ'հետ աղուոր:
 Ա՛յն կը մեռնի եւ հողին հետ հող կ'ըլլայ,
 Որ չունեցաւ սուրբ պայքար,
 Որ չըհերկեց ծրուած մածի մը վըրայ,
 Գէթ հատիկի մը համար.
 Որուն հոգին չունեցաւ լար քընարի

Վշտին ժպիտ մը տալու.
 Ոչ տըկարին ձեռք երկարեց սիրալիր,
 Որ չըզայթի մահացու.
 Չըբարձրացուց գըլուխն երկինք լուսաւոր,
 Սիրեց անդունդ եւ խաւար.
 Թափառեցաւ Կայենի պէս մեղաւոր,
 Տափաստաններ առապար:
 Ո՛վ Աստուած իմ, դուն քու ձեռքովը բացիր
 Արդարներու դամբարանն.
 Գողգոթայի վարչամակով սրբեցիր,
 Խոնջ ճակատներ վանական:
 Ո՞ր սաղմոսէն աստուածաշունչ երգ երգեմ,
 Սիրտըս սիրով կիսելու.
 Մեր ո՞ր սուրբին արցունքներէն չիթ առնեմ,
 Փակ աչքերուն լոյս տալու:

Ժ.

Ուր միաբան վաստակեցին, հանգչին անդ.
 Հարք եւ եղբարք Մխիթարեանք.
 Եւ աշխատանքն եղաւ հաւատք անվրկանդ,
 Եւ սիրտն եղաւ ոսկի հանք:
 Իջաւ Մեսրոպ, լոյսէ տառերը ձեռքին,
 Մարգարէի տեսիլքով.
 Բոցն հողիին հասաւ մինչեւ այս կղզին
 Հաղար աստղի թեւերով:
 Այս չիրմատունն, ուր ես կու գամ ամէն օր
 Անդենական խոկումի,
 Ինձ կը թըւի տաճար մը հին փառաւոր,
 Ինչպէս Գեղարդ եւ Գառնի:
 Փոքրիկ է նա իր պարզութեան մէջ խոնարհ,
 Ըստուերին տակ ծառերուն.
 Երկինքը մօտ, ծառը ծառին հետ կամար.
 Կարծես քաշուած յօնք ըլլար:
 Իմ ձեռքերովս ածու ածու կը բաժնեմ
 Ճերմակ վարդեր ու շուշան.
 Մեռելներուն պաղատանքն ես լաւ դիտեմ,
 Մարդիկ զիրենք չըմոռնան:
 Մոռնալ չիրիմն անքաւելի ոճիր է,
 Հին դարերէն անիծուած,
 Վա՛յ անոր, որ մօմը չիրմին կը մարէ
 Սրտին վըրայ քար դըրած:
 Ես ո՞ւր փնտռեմ գերեզմաններ անծանօթ,
 Անապատէ անապատ.
 Այն ո՞ր արփին պիտի բանայ առաւօտ
 Իր շողերով խանդակաթ:
 Ամէնուրեք հայու ոսկոր կիսաթաղ,

Հայու անուն պըղծւած.
 Արդարութեան ձեռքը տըւէք, անյապաղ,
 Սուրն հըրեղէն մերկացած:
 Ո՛հ, մի՛ թողնէք որ փուշն աճի սայրասուր,
 Բանայ վէրքերը նորէն.
 Թող դան մայրեր, դընեն աչքի սուրբ համբոյր,
 Ու սիրոյ հետ վարդ դընեն:
 Հոս վանական վանականի մօտ շարուած,
 Ինչպէս կերոն կերոնի,
 Կը հսկեն հայ ճակատագրին տանջուած,
 Եւ օրերուն դալիքի:
 Կարծես ըլլայ մէկը միւսին քաղցըր կեանք,
 Եւ երկու սիրտ միասին.
 Երբ մէկն ողբայ, միւսը կ'ըլլայ ըսփոփանք,
 Թեւը կամար թիկունքին:
 Ո՛վ հողիներ, որոնք էին իմաստուն
 Թաքուն էջեր կարգալու,
 Անցեալն եղաւ տեսիլներով առլըցուն,
 Իմանալու, սիրելու:
 Արդ կը ննջէ մանուկին քով ծերութիւնն,
 Եւ կարմիր հողն է վերմակ.
 Այնպէս կարմիր, մարտիրոսի գերդ արիւն,
 Եւ հայրենի յիշատակ:
 Ո՞վ չ'երազեր բուռ մը հողէն հայրենի,
 Սրտին վըրայ ցանելու.
 Հայաստանի սէրը կու գայ կը հանգչի
 Յաւերժութիւն դառնալու:

ԺԱ.

Այստեղ ննջեց ութսունամեայ ծերունին,
 Երբ իր լապտերը մարեց.
 Երբոր վերջին բոցը դարձաւ երկընքին
 Եւ արեգակ մ'եղաւ մեծ:
 Ո՞վ է արդեօք որ անունովն իր հսկայ,
 Աշխարհ մ'ամբողջ կը լեցնէ.
 Կը նըմանի հորիզոնին հեռակայ,
 Ուր ամէն ինչ խորհուրդ է:
 Արարչազործն իր մատներով առանձին
 Հիւսեց լոյսէ ծիրանի.
 Մահէն յետոյ անմահացաւ աւելի,
 Սէրն իր վըրան կը խօսի:
 Գետեր ելան, եւ փոթորիկ իր սրտէն,
 Ելան Արաքս եւ Նփրատ.
 Եւ տենչանքներն առին թեւեր բոցեղէն,
 Ելան մինչեւ Արարատ:
 Թառեցան իր երկնատարած թեւերուն

Արեգակներ եւ աստղեր.
 Ու չունեցաւ օրն իր երբեք իրիկուն,
 Երբ խոնարհած կը գըրէր:
 Եւ կը գըրէր լոյսին համար, մեղ համար,
 Սիրոյ համար հայրենի.
 Կարծես երկիրն իր ոտքերէն խոյս կու տար,
 Կը հնչէր ժամն անդադար:
 Փոքրիկ կղզին եղաւ տաճար մ'արքունի.
 Աստուածացաւ Հայաստան.
 Շինեց իրեն սրտին խորան պաշտումի
 Հողն հայրենի սրբազան:
 Ո՛հ, երանի՛ այն առաջին ստեղծուած
 Հայրենական աշխարհին,
 Ուր զաւակներ արեւուն մէջ սրբացած
 Վահագնի պէս կը ծընին:
 Այնտեղ չըկայ առանց փառքի հընութիւն,
 Ոչ թիզ մը հող անանուն.
 Ուր սիրտ մը՝ որ չունի երբեք ծերութիւն,
 Ոգեկոչեց նոր Գարունն...:
 Եւ ես տեսայ Արարատին քով Սիսուան,
 Գմբէթ տեսայ երկնամուխ.
 Աստուծոյ մօտ տեսայ լեռներն հայկական
 Իբրեւ աղօթք սրտաբուխ:
 Ու ճակատէն Նահապետին կը հոսէր
 Քիրտը նըման աստղերու.
 Դարերու հետ կ'անցնէին բիւր խոկումներ
 Լոյս եւ մարմին առնելու:
 Ձըկար իրեն աչքերուն մէջ մութ, հեռու,
 Ոչ հորիզոն խոնարհող.
 Երկինքն էր լայն կամար կապած դարերու,
 Պատմութիւնն էր հետեւող:
 Երբ կու գային ճերմակ թեւով կըռուկներ,
 Գազաթներէն Մասիսի,
 Կարծես Աստուած իրեն համար կը ստեղծէր
 Երջանկութիւն մ'աւելի:
 Եւ այս փոքրիկ կղզիին մէջն առանձին
 Հաւատքին հետ եղաւ ջահ.
 Պահեց միայն խոնարհութիւնն իր անձին
 Եւ սրբութիւնը կապայ:
 Դեռ կը կրկնեն հով ու ալիք ծովէ ծով,
 Նըւազներու քաղցրութիւնն.
 Արեւմարին բլրուլ կու գայ շիրմին քով,
 Կարօտ անցած օրերուն:
 Եւ հոս, ինչպէս արփին, խոնարհ ամպի տակ,
 Իր սըքեմով ծածկեցին.
 Ու տարածեց անմահութիւնն ըսպիտակ
 Արդարներու ծիրանին:

Փա՛ռք հանճարին, որուն վըրայ չեն ճնշեր
 Ժամանակներ ու մարմար.
 Որուն շիրմին ուխտի կու գան սերունդներ,
 Եւ Հայութիւն խանդավառ:
 Ո՛հ, լա՛ւ եղաւ, լա՛ւ եղաւ մահն անոյ՜ջ քուն,
 Սիրտը պիտի փըշըրէր.
 Տեսնելով ջարդ եւ աւերակ եւ արիւն,
 Սիրտը պիտի փըշըրէր:

ԺԲ.

Հաւախօս էր. բացուեցաւ դուռն Ապրիլի,
 Դուրսը կանաչ, Ծաղկազարդ.
 Կարծես նոր էր ներկուած երկինքը ծաւի,
 Աչքերու պէս մանկամարդ:
 Մ'ըմունջ մը կար բոյներուն մէջ՝ փոքրիկ
 Թեւի բախում ցնծադին.
 Իրենց վըրայ նորեկ տերեւն էր տանիք
 Վարը ցօղուտ վարդենին:
 Դարձաւ եղեամն հազար դոյնով ծիածան,
 Հանդերձն ինչպէս նոր հարսի.
 Ո՛րքան լացի որ աչքերուս մէջ մընան
 Երազանքներն Ապրիլի:
 Գերեզմանոցն ունէր հիմա նոր դարուն
 Հիւսուած լոյսէ պատմութեան.
 Ուր մարմարներ կը ցոլային արեւուն,
 Հողն էր կանաչ աւազան:
 Գարունն այստեղ երգով կու գայ ցնծալի,
 Շողերուն ձե՛ռքը քընար.
 Սէրը սիրոյ աչքերուն մէջ կը նայի
 Նոր թովչանքի մը համար:
 Ափերըս լի ոսկեջրած յասմիկով,
 Շիրիմ շիրիմ բաժնեցի.
 Ի՛նչ հեշտութեամբ անցեալին հետ ապրելով,
 Առին անոնք նոր ոգի:
 Անլըռելի դաշնակութիւն մը հեշտին,
 Անցաւ ծաղիկ առ ծաղիկ.
 Շատ նըման էր դեռ չանխճուած դըրախտին,
 Երբ Եւան էր զեղեցիկ:
 Շիրիմներէն չեն բաժնըւիր երազներ,
 Ըստուերն ինչպէս նոճիէն.
 Քաղցր յուշերուն հետ թեւ թեւի, սրտաւեր,
 Անանց դարուն կը փնտռեն:
 Ո՛վ Տէր, արդեօք ես ալ այսպէս ծոցն հողին,
 Պիտի ապրե՞մ երազով.
 Պիտի սպասե՞մ որ ուրիշներ գան անցնին,
 Հազիւ անունըս տալով:

Ինչպէս եղաւ Գողգոթան :
 Մեռելոց է. ամէն շիրիմ չող կ'ուզէ ,
 Եւ մոմի լոյս արցունքոտ .
 Քարի համբոյրը սրտերու դող կ'ուզէ ,
 Հետն հառաչանք ու կարօտ :
 Բայց ի՞նչ հանդարտ վանականներ կը հանդէին ,
 Խորհուրդի փակ աչքերով .
 Յոգնած էին նըման հերկող մըշակին
 Որ կը ննջէ մաճին քով :
 Իւրաքանչիւրն ունէր սրտի անդաստան ,
 Ուր ցանեց սերմը բարի .
 Հասկեր ելան եւ հնձեցին բերկրաձայն ,
 Վանականներ միաբան :
 Վաստակեցան , վաստակեցան անդադար ,
 Անցան մինչեւ Հայաստան .
 Բացին աղօս , ուր հողին էր առապար ,
 Սիրտը չունէր բուրաստան :
 Ծաղիկներէն առին երանդ ու նեկտար ,
 Մեր երկինքէն խորութիւն .
 Երգերուն մէջ Եղիշէին սիրտը կար ,
 Նարեկացին կար խոհուն :
 Ու Սէրն հիմա , աստուածուհի անբաժան ,
 Կը դողէ կեանքը կեանքի .
 Մէկը ընտանիք՝ կամարին տակ անսահման ,
 Որ Հայաստան կը կոչուի :
 Հաւատացէք ինձ , եղբայրներ , մահն հիմա
 Սարսափ մը չէ մեզ համար .
 Երկինքներէն բարի հրեշտակ մը կու գայ ,
 Մեզ դնելու ճանապարհ .
 Եւ ինքն է որ հողին դրկած կը տանի
 Դէպի ափերն անսահման
 Իր դրկին մէջ ծերն իսկ մանուկ կը թըլի ,
 Որ նինջ կ'ուզէ մշտնջեան :
 Վայրկեան մը լոկ՝ գերեզմանին մէջ փակուած
 Պիտ'ըսպասէ մեր մարմինն .
 Եւ պիտի գայ անժամանակն ինքն Աստուած ,
 Հողի տալու վերըստին :
 Ես կը սիրեմ գերեզմաններն աշխարհի ,
 Աղքատը մօտ հարուստին ,
 Որոնց վըրայ միշտ կայ երկինք մը ծաւի ,
 Խաղաղութեան ձիթենին :
 Մեռելոց է. եւ մեռելոց հայկական
 Անապատներ մինչ հեռուն .
 Այդ օրն է որ որբեր ժըպիտ կ'ունենան ,
 Ճաճանչ մ'ամէն հայու տուն :
 Մեռելոց է մեր աւերակ վանքերուն
 Եւ հիւղերուն ամայի .

Օրոցքին քով արինւլըայ հարսերուն
 Եւ կոյսերուն ծաղկատի :
 Պիտի հնչէ , ահագողոչ պիտ'հնչէ
 Փողն յարութեան հայրենի ,
 Եւ Մասիսէն պիտ'Արտաւազդն արշաւէ ,
 Ձեռքին մէջ շանթ վաղեմի :

ԺԴ.

Վանական մ'իր դըլուխն յանկարծ բարձրացուց ,
 Ծովէն ելած լուսնի պէս .
 Խաչ մ'ոսկեղէն դրկած էր իր պարանոցն ,
 Դէմքն հեղութիւն էր կարծես :
 — Ո՛վ դու քերթող , ըսաւ ձայնով մը հեշտին ,
 Որ թըլեցաւ ինձ սըրինդ ,
 Այս ծաղիկներն իմ մատներուս բոյրն ունին
 Եւ աչքերուս պարզ երկինք :
 Արեւելքի պարտէզներէն ես բերի ,
 Գոյնը դոյնէն գեղեցիկ .
 Կը նաղէին կոյսի մը պէս Սիոնի ,
 Քընարիս հետ տասնաղի :
 Նըւաղեցի չքնաղ օրե՛րը դարնան ,
 Ինչպէս արե՛ւը կ'ըղձար .
 Ո՛ւր կայ արդեօք վարդենիէն սիրական
 Բանաստեղծի մը համար :
 Ես բընութեան խորհուրդներուն մէջ տեսայ
 Սիրոյ պատկե՛րը թաքուն .
 Թէ ծառերուն , մամուռներուն մէջն ալ կայ
 Յուզումներու քաղցրութիւն :
 Ի՞նչ հեշտութեամբ իմ ափերուս մէջն առի
 Խոնաւ կոկոնը վարդի .
 Կը թրթռար սիրտը նըման արտոյտի
 Երբ իր բոյնէն կը զատուի :
 Ու կտրեցի եղէգներէն Արաքսի
 Ինձ նոր սըրինդ հովուական .
 Նըւաղեցի հին դըրոյցներն հայրենի ,
 Գեղեցկութիւնն Արայի :
 Սիրելի մարդիկ ծաղիկներէն սորվեցայ ,
 Եւ հողն եղաւ ինձ մատեան .
 Տեսնա՞նք լոկ որ իմ սրտիս մէջը կայ՝
 Կղզին մընար բուրաստան : —
 Տեսայ ես իր շիրմին վըրայ ոսկետառ
 Գիրք մը նըման պարտէզի .
 Աներեւոյթ ձեռք մը դարձեալ դոյն կու տար ,
 Ածուներուն Մայիսի :

ԺԵ.

Քեզ ո՞ր փնտռեմ, ո՞վ հեղ զաւակ Տարօնի.
Թէ բախտն այնքան սեւ չըլլար,
Պիտ'ելլէիր մինչ զաղաթներ Մասիսի,
Ձեռքիդ տաւիդ ոսկեւար:
Պիտ'երգէիր Եղերաբախտն Արտաւազդ
Ճակտին պըսակ՝ վեհութիւնն.
Եւ վաւաչոտն իր ոտքերուն տակ տապաստ
Պիտի խըմէր իժի թոյն:
Քանի՜ արդեօք արշալոյսներ մընացին
Աչքերուդ մէջը ծաւի.
Բարի հոգիդ երազեց միշտ այս կղզին
Կարօտ կանաչ արեւի:
Բայց յիշատակդ աստղի մը պէս հեռաւոր
Մեզի կու գայ ամէն օր.
Օրօրեցիք դու մանկութիւնս իմ աղուոր
Հայրենիքի երազով:
Լոկ խանդ էիր, նըման արծուի թեւերուն.
Ու տեսիլք էր Հայաստան.
Ո՞ր գտնէի այնքան հաւատք պատմութեան,
Եւ փառքը դէմ յանդիման:
Գէթ ըլլայիր, հոս ըլլայիր խաչին տակ,
Ունենայիր գերեզման.
Երբ զանգն հնչէր, զառնար ծովէն Արուսեակ,
Քեզ այցելէր հայ Մուսան:

ԺԶ.

Երեկոյ էր. կը սպասէի անձկադին
Լուսաւորչի կանթեղին.
Կ'ըսեն թէ նա ամէն հայու սընարին
Արցունք արցունք կը վառի:
Գեղեցկութիւն մը սրբազան կը լեցուէր
Հորիզոնին մէջ կարմիր.
Լըճակն հազար նունուֆարի գոյն ունէր,
Սուրբ Ղազարն էր ոսկեծիր:
Կը քաղցրանար խոր լըռութիւնն աւելի
Ինչպէս առկայծ ճըրագներ.
Մինչդեռ խաւա'րը կը փակէր դուռն երկին՝
Աստուած աստղեր կը վառէր:
Հիանալի, զարմանալի գիշերներ,
Խաղաղութիւն անըսպառ.
Ինչ որ անյայտ, անըրջական տեսիլք էր,
Ձէի ուզեր վերջանար:
Շիրիմներուն ես փարեցայ միւսանգամ,
Աստղերն իմ հետըս լացին.

Ո՞ր մէկուն հետ ես չըլլայի բարեկամ,
Սրտէս առին ու տարին:
Հորիզոնէն ելաւ դողդոջ լուսընկայ,
Ու փոխուեցաւ լիճն արծաթ.
Ձանդակատո'ւնը շողերով վառ տեսայ,
Տեսայ կերոն անարատ:
Ու ծառէ ծառ, ճնճղուկի պէս անհանդարտ
Ձեփիւռն իջաւ երգելով.
Այս պահն է ուր մարդը կ'ըլլայ կրկին մարդ,
Իր հոգւոյն հետ խօսելով:
Լըսեցի ես մըմունջներ խոր, մեղմաճայն,
Նըման հանդարտ առուակի.
Մեռելներուն հետը խաղաղ գիշերուան
Բընուցիւնն ալ կը խօսի:
Ո՞րքան կային հծծիւններ մօտ իմ սրտին,
Ի՞նչ սրբութիւն հոգեկան.
Անբաժան են յիշատակներն անցեալին՝
Խորհուրդին մէջն իսկ մահուան:
Կը միանան հոգիին հետ հոգիներ
Կը փարի սի'րտը սրտին.
Ինչ որ մարդիկ կը համարին անդունդներ,
Այի մ'է ասդին եւ անդին:

ԺԷ.

Ե՞րբ պիտի դաս, դուն ամէնէն սիրելիս,
Ե՞րբ պիտի ձայնդ լըսեմ.
Դուն զարնան պէս վարդ մը ձեռքիդ գլուար զիս,
Եղար հրեշտակ քաղցրագէմ:
Ես քեզ համար լացի ինչպէս որբութիւնն,
Շիրիմդ երբոր փակեցին.
Ու հեռացան կարծես արեւ ու գարուն,
Սիրտըս կուրծքէս հանեցին:
Եւ ուզեցի որ դայն ափիդ մէջ դընեն,
Գէթ ըզգայի ըսփոփանք.
Ու զանդակներն երբ առտուան կը հնչեն՝
Մէկ ըլլար մեր պաղատանքն:
Ծաղիկներուն մէջը պէտք է հանգչէր
Ու ծիածանը՝ վերմակ.
Եւ ամէն օր ինձ սրտագին խօսէիր
Ես՝ հոգեղէն, դուն՝ հրեշտակ:
Քովըդ, գիտեմ, մէկը դըրին ժպտադին
Որ չըմընաս դուն մինակ.
Երկու շիրիմ՝ մէկ օրհնութեամբ կնքեցին,
Ինչպէս սիրոյ պատարագ:
Ըսէ, արդեօք նա կը ժպտի՞ տակաւին,
Բարութիւնն իր կը խօսի՞.

Երբոր Աստուած մեռելներուն դայ այցի,
Սուրբ Ղազարէն թող անցնի:

ԺԸ.

Հանգչէ՛, քոյր իմ, դամբանըդ հող ու քար չէ,
Այլ փափուկ թեւ հրեշտակի.
Դուն ալ ինձ պէս լըսեցիր ձայնն երկնքի.
— Վաճառէ՛, տո՛ւր աղքատի —:
Ու բաժնեցիր սիրտդ օրհնըւած մանանայ,
Ձաւակներուն Մեսրոպի.
Թշուառութեան հետ բարձրացար Գողգոթայ,
Վերոնիքա արցունքի:
Հանգչէ, քոյր իմ, Յոյսն է այստեղ խնկաման
Հաւատքը ջահ քեզ համար.
Երախտիքն է անմահութիւնն բարութեան,
Կղզին յաւերժ օթեւան:

ԺԹ.

Այնտեղ հեռուն չորս նոճիներ թեւ թեւի
Արտասուելու սիրտ չունին.
Երիտասարդ մ'հոն առանձին կը հանգչի
Աչքերը բաց տակաւին:
Անոր տըւին երգի շնորհ մուսաններն
Արեւելեան երազներ.
Բայց սէր ու երգ առանց լարի մընացին,
Կը բաբախէ սիրտը դեռ:
Որքան տենչեր շիրմին առջեւ կանգ առին.
Յոյսը մընաց անբարբառ:
Ո՛հ, Տէր, ինչո՞ւ, կը հարցընեմ վերըստին
Սոխակն իյնայ նետահար:
Ո՛հ, մի՛ թողներ որ շուտ անցնին դարուններ.
Թող ամէն սիրտ բողբոջի.
Ո՛րքան հոգին դաշնակութեամբ կը լեցուէր,
Երբ կը նայէր երկինքի:
Ու շրջեցաւ Աւարայրէ Աւարայր,
Արդարներու սէրն երգեց.
Ո՛հ, կը յիշեմ, աչքերուն մէջ արեւ կար,
Կար հայրենի սէրն անեղծ:
Արդ կը հանգչի մեծ յոյսերէն անբաժան,
Մեծ հաւատքի խաչին տակ.
Այստեղ ընտրեց Հոգիներու հանդրուան,
Մըխիթարի զերդ զաւակ:

Ի.

Փոքրիկ մ'այստեղ բերին ճերմակ քողերով,
Մէջը ծաղկեայ դադաղին,
Երբ արշալոյսն արուեստագէտ մատներով
Կը նըկարէր նոր արիւն:

Տեսայ հոգին՝ այդող ամպի պէս ճերմակ
Կը բարձրանար դէպ՝ երկին.
Ոչ ոք ողբաց. ըսին՝ եկաւ հըրեշտակ,
Երկինք դընաց վերըստին:

Ո՛վ դու մանկիկ, ոսկի թեւերդ ո՞ւր դըրին.
Սիրտըդ արդեօք ո՞ւր դըրին.
Ո՞ր կոյր աստղին լոյսի հաճոյքը տըւին
Քու բերքերովդ ծաւի:

ԻԱ.

Ձեմ գիտեր ե՞րբ Ըսփինքսի դէմքը բացին
Այստեղ մահուան հսկելու.
Ե՞րբ հոս բերին Նեղոսին ողբը դեղին
Եղիպտական օրերու:

Եւ հոգիներ, որոնք հայու լոյսն ունին,
Մարմարին տակ կը սպասեն,
Որ իրենց ալ պատակ սիրտերը լեցուն
Շարականի աղբիւրէն:

Իրենց համար եւս արեղակ կը ծաղի
Կղզիին մէջն ամէն օր.
Եւ բարութիւնն աղօթական կը փարի
Յիշատակի մ'հեռաւոր:

Ո՛հ, սիրտ կո՛ւզեն, կ'ուզեն ծաղիկ, աչքի լոյս
Մոմեր՝ առատ արցունքով.
Թող իրենք ալ ունենան միշտ հայու յոյս,
Շարականի աղօթքով:

ԻԲ.

Երթամ բախեմ եկեղեցւոյ դուռը փակ.
Վառեմ հաղար ու մէկ ճրագ.
Եւ աչքերովս պաղնեմ խորան եւ որմեր,
Մեռելներուն յիշատակ:
Ծունրը կրկնեմ մոմերուն հետ խոնարհած՝
Աներեւոյթ Հաւատքին.

Ծուռկերս կըթոտ եւ բազուկներս լայնաբաց
 Ըլլան խորհուրդ նիւթացած:
 Այն է, դիտեմ, դուռն երկինքի մշտաբաց,
 Ուսկից սուրբեր կը մտնեն.
 Ուր Սէր եւ Յոյս զիրար քըրոջ պէս դրկած,
 Արդարներուն կը սպասեն:
 Ուր մէկը կայ տապանակին չատ մօտիկ,
 Շիրիմ չունի, այլ խորան.
 Երկնքէն կախ ճաճանչ մը կայ ցոլացիկ
 Որ չի մարիւր յաւիտեան:
 Միւրտ մը խոշոր Լոյս զըւարթի գերդ բուրվառ,
 Միշտ կ'արծարծի ինքնիրեն.
 Դարեր անցան գերդ լուսամիտ դադափար,
 Անմահութիւն է նորէն:
 Կը լեցնէ եկեղեցին իր լոյսով,
 Նըման օրուան արեւի.
 Եւ հայրենի սուրբերուն մէջն իր փառքով
 Հայաստան մ'է կենդանի:
 Ուսկից եկաւ օտարական ամբերուն,
 Ճակատագրին յանձնըւած.
 Ո՞ր ալիքներն առին իրենց ուսերուն,
 Զերդ արեգակ մարդացած:
 Անցաւ լեռներ, ովկէան անցաւ արծուեթեւ,
 Խաղաղ բոյնի մը համար.
 Պիտի դընէր հոն զաւակներ նորաթեւ,
 Մեծ հաւքերու հաւասար:
 Կը հետեւէր նենդութիւնն իր քայլերուն,
 Նախանձին հետ թեւ թեւի.
 Կանգ առաւ հոն՝ ուր հանդերձն էր արեւուն,
 Քըրիստոնեայ ծիրանի:
 Հըզօր թըռիչք, հըզօրադոյն տեսիլներ
 Ծուք էին իր գընացքին.
 Ամպ էր չորս դին, ինքն անոնց մէջ կ'երեւէր
 Անմահութիւնն իր ցեղին:
 Ի՞նչ թըռիչքով բռնեց ճամբան երկընքի,
 Ուր բարձունքներ կը տեսնէր.
 Հասաւ այնտեղ՝ ուր հորիզոն կը պակսի,
 Եւ կը սկըսի միայն Սէր:
 Իր սրտին մէջ պարուրած բիւր տենչանքներ,
 Հայրենի տուն ու տաճար,
 Կ'ուզէր Մասիսը շողշողար անըստուեր,
 Մեսրոպ կրկին երեւնար:
 Աշխարհս եթէ խարոյկ ըլլար, ինքը զոհ,
 Բոցին համար պիտ'ընտրէր.
 Պիտի սիրէր, կրկին ողի պիտ'առնէր,
 Անմահանան ուրիշներ:
 Արդ կը հանգչի գերդ թեւամփոփ հըրեշտակ,

Յաղթանակի արդար քունն.
 Նա չէր ծընած մահկանացու հասարակ
 Աստղի մը տակ անանուն:
 Այս շիրիմ չէ՛, այլ եօթնադոյն պարունակ,
 Մէջն առաւօտ մշտալոյս,
 Մէջն հայ Ոգին, ծովերուն մէջ տապանակ,
 Խաչը վըրան դըրօշակ:
 Եկան դարեր, ուխտաւորներ դիւահակ
 Տառապանքի աշխարհէն.
 Վառեց ամէն ոք սրտի տենչը ճըրագ,
 Մասունք առաւ շրթներէն:
 Մասունք առաւ, հաղորդութիւն անցեալէն,
 Եւ լոյս առաւ դալիքէն.
 Ինչ որ հըրաշք, գեղեցկութիւն, շընորհք էր
 Կու դար միայն երկընքէն:
 Եւ իր հոգին ծիածանի լայն թեւով
 Երկու ամբեր կը զօդէր.
 Արիւնաքամ հող մը կար հին անունով,
 Կղզի մը կար սիրաշեր:
 Եւ հոս է նա, տապանակին առնթեր,
 Երբեմն ինչպէս կ'աղօթէր.
 Կը լըսեն ձայնն Արարատի որդիներ,
 Մտնելու նոր պայքարի:

ԻԳ.

Ո՞վ Տէր, ո՞րքան հըրաշքներով պատեցիր
 Եդեմական այս կղզին.
 Սերովբէներ շուրջը պահակ կանգնեցիր,
 Եւ սուրբ հայեացքդ ալ երկին:
 Արցունք էր հոն, որ կը կոչուի Հայաստան,
 Պէտք էր աչքերը սրբել.
 Ու սերմանել իր դաշտերուն մէջ խոտան
 Յորենի հասկն ոսկեթել:
 Գարուն պէտք էր ծաղիկներուն արիւնոտ,
 Աղբիւր կ'ուզէր հոգն երաշտ.
 Որ ունենար որքն հայրենի առաւօտ,
 Սրտին հետ սիրտն ըլլար հաշտ:
 Ո՞հ, չըմընար կարօտ սիրոյ որբութիւնն,
 Օճախին քով քընանար.
 Տրոփուն սիրտն աղանեղէմ կոյսերուն,
 Վարդերու բոյրն ունենար:
 Ծարաւ մտքեր եւ դերբուկներ շատ էին,
 Առանց փուշի սիրտ չըկար.
 Տանիքներուն կըռուկներ բոյն կ'ուզէին,
 Աստղը կ'ուզէր ոսկի թառ:
 Ո՞ւր օրօրէր մայրը որդին սիրելի,

Երբ օրօցքն ալ այրեցին.
Արին կար հոն, ո՛չ ցնծութիւն հարսնիքի,
Ուր դրրախան էր երբեմնի:
Ո՛րքան արցունք, ո՛րքան աւեր, ո՛րքան վէրք...
Ո՛ր հայ Ողին պիտի դար
Ուրախութեան փոխելու մեր թախծոտ երգն,
Լոյսը տալու սուրբ նշխար:
Ի՞նչ խորհուրդով Դուն ընտրեցիր այս կղզին
Հեռու ծաւի Սեւանէն.
Քեզի համար նոյնն էր երկիր եւ երկին,
Յանելու աստղ ու ցորեն.
Եւ անծանօթ ճամբաներով հոս բերիր
Մատղաշ շողեր հայրենի.
Մեծցան անոնք եւ ափերուն մէջ դըրիր
Եւ հուր եւ տառ Մեսրոպի:
Շունչ տըլին միշտ. բորբոքեցին դարէ դար
Սէր եւ հաւատք երբեմնի.
Նոյն բոցն է որ կ'առաւօտէ անդադար
Երբ դռնեցիր — Ե Ղ Ի Յ Ի —:

ԻԴ.

Մեռելոց է. անմահութեան ճերմակ տօն,
Թեւերուն տակ Զատիկի.
Հրեշտակ կ'իջնէ, ձեռքն երկնային նոր կերոն,
Աղօթքը ջերմ աւելի:
Մեռելոց է. խումբ խումբ կու դան դաշտերէն
Դեռ ցողաթուրմ յասմիկներ.
Շիրիմներուն վրան ծնրադիր աղօթք են,
Անմեղութիւն անըստուեր:
Ինչո՞ւ արցունք, ինչո՞ւ հեւքոտ պաղատանք,
Նոյնն է Աստուած եւ անդին.
Ո՛վ հէգ մայրեր, խաչէն առէք ըսփոփանք,
Ուր Մայր մը կար ցաւադին:
Կը հաւատամ հոգիներու յարութեան
Խօսքերուն հետ Յիսուսի.
Եւ օր մ'ինձ ալ պիտի ըսուի անպայման.
— Ա՛ռ քու մարմինդ եւ արի՛ —:
Մեռելոց է. դերեղմաննոցը վանքին
Կը դառնայ նոր բուրաստան.
Կը բարձրանայ խունկը լաչակ արեւին,
Աղօթք արդէն զանգի ձայնն:
Այսօր միայն մեռելոց է հայկական,
Հայ հոգիին վարդավառ.
Ու դարերու ննջեցեալներ կ'արթնան,
Խորան՝ ամէն մէկ խաչքար:
Ո՛վ Հայութիւն, խաչի ճամբայ լոկ տեսար.

Եւ տունդ եղաւ քեզ դամբան.
Մահը կեանքին արեւելքն էր քեզ համար:
Արդ սուրբերուդ, հերոսներուդ անունով
Վանականներ երգունցան.
Կոփեցին միտքն, հիւսեցին փառք՝ իրար քով,
Եւ կոչեցին զայն մատեան:
Կարելի չէ վէրքը սուրով բըժըշկել,
Սէրն է դարման ցաւերուն.
Յիսուսաբար դիտցան առաջ արտասուել
Եւ յետոյ տալ յարութիւն:
Վաստակաբեկ արդ կը ննջեն միաբան
Հայ Ողին թեւին տակ.
Շատ սիրեցին. օրհնեա՛լ ըլլայ յաւիտեան
Արդարներուն յիշատակ:

Տ Սեպտեմբեր, 1967

ԱՎՆԱՐԿՆԵՐ

- Ե. — Հ. ՄԻՔԱՅԷԼ ԶԱՄԶԵԱՆ (1738-1823). «Պատմութիւն Հայոց»ի սկզբանէ աշխարհի մինչեւ
ցամն 1784 (երեք հատորով), տպ. 1784-1786:
Զ. — Հ. ՂՈՒԿԱՍ ԻՆՃԻՃԵԱՆ (1758-1833). «Ստորագրութիւն հին Հայաստանեայց» (տպ. 1822),
եւ «Հնախօսութիւն Հայաստանեայց աշխարհի», տպ. 1835:
Է. — Հ. ԱՐՄԷՆ Կ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ (1790-1866). «Հայկ դիւցազն» (տպ. 1858):
Ը. — Հ. ԳԱԲՐԷԼ ԱՆԵՏԻՔԵԱՆ (1751-1827). «Մեկնութիւն կամ Լուծումն Նարեկայ (Նարեկ-
լուծ), տպ. 1801, 1822, 1859:
Թ. — ՎԵՐՈՅԻՆԷԱՆ ՀԵՂԻՆԱԿԷՆ՝ «Բացատրութիւն Շարականաց», տպ. 1814:
ԺԱ. — Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ (1820-1901):
ԺԴ. — Հ. ԵՂՈՒԱՐԴ ՀԻՒՐՄԻԻԶ (1799-1876). «Բուրաստան», տպ. 1851:
ԺԵ. — Հ. ԿԱՐԱՊԵՏ ՏԵՐ-ՍԱՀԱԿԵԱՆ (1882-1915), Նահատակուած Տրապիզոնի մօտերը:
ԺԶ. — Հ. ԵՂԻԱ ՓԵՉԻԿԵԱՆ (1895-1964), դասընկեր Հեղինակին:
ԳՐՊԾ. ՍՐԱՊԻՈՆ ԱՐՔՊ. ՈՒԼՈՒՀՈՅԵԱՆ (1890-1965), Ընդհ. Արրահայր Միաբանու-
թեան (1935-1964):
ԺԸ. — ՏԻՐՈՒՀԻ ԵԱՂԼԳԻՃԵԱՆ (1844-1920), բարերարուհի Միաբանութեան:
ԺԹ. — ԳՈՒՐԳԷՆ Մ. ԱԼԷՄՇԱՀ (1907-1947), երաժիշտ եւ նախկին աշակերտ Մուրատ-Ռաֆայ-
էլեան Վրժ.ի:
Ի. — ՎԱՐԳԳԷՍ ԳԱԼԵՆՏԵՐԵԱՆ (1945-1957), վաղամեռիկ աշակերտ Մուրատ-Ռաֆայէլեանէն:
ԻԱ. — ԻՍՊԷՆԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ, բարերար Միաբանութեան:
ԻԲ. — ՄԽԻՔԱՐ ԱՔՐԱՅԻ դամբանը: